

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

**Նոր Տարվո լուսաբացը վերստին բերում է Հայոց հուսացյալ աշխարհին՝ մեծ ավետիսը Փրկչին մեր Հիսուսի Սուրբ Ծննդյան և երկնային պատգամը հրեշտակաց՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:**

**Սույն Աստվածառաք ավետիսով ողջունում ենք Ձեզ սրտանց և մաղթում Ձերդ Սրբության երկնատուր ամեն բարիք ու աբևշատ բազում տարիներ՝ շարունակելու Ձեր նվիրական առաքելությունն ի պայծառություն Ձեր սուրբ Աթոռին և Ձեր եկեղեցյաց:**

**Առաքում ենք նաև Մեր հայրական սերն ու օրհնությունը Ձեր բարեպաշտ ժողովուրդյան և սուրբ Աթոռիդ ուխտապահ միաբանության, աղոթքով սրտաբուխ, որ բոլորը ձեռք-ձեռքի տված համերաշխ գործակցությամբ շեն և պայծառ պահպանեն Ձեր աղոթքի Տունները և միշտ բարձր պահեն սուրբ անունը մեր Առաքելական Մայր եկեղեցու:**

**«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ, ձեզ և մեզ մեծ աւետիս». ամէն:**

**ՎԱԶԳԵՆ Ա**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: